

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼԻԼԻԹ ՑՈԼԱԿԻ ՄՈՎՍԵՍՅԱՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ «ԲՆԱԿԱՎԱՅՐ» ԲԱՌԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԻ
ԼԵԶՎԱՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՐՊՆ ԻՄՊԱՆԵՐԵՆԻ ԵՎ
ՀԱՅԵՐԵՆԻ ԶՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ

Ժ.02.07 - «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուական գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի՝ Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Կ. Շ. Աբրահամյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բ.Գ.Պ., դոցենտ Ն. Լ. Հարությունյան
Բ.Գ.Թ., դոցենտ Ն. Ռ. Մկրյան

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ. փետրվարի 10-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ ԲՈՂ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. դեկտեմբերի 29-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
Բ.Գ.Պ., պրոֆեսոր

Ե. Լ. Երզնկյան

Գիտակցական և մտածական գործընթացներն ու մեխանիզմները բազմակողմանի և ճշգրիտ հասկանալու գործում մեծ դեր է խաղում լեզուն, որի միջոցով լեզվականացվում են մտածական գործունեության շատ արդյունքներ, և տեղեկություն է տրամադրվում գիտակցության կառուցվածքի մասին: Ավելին, լեզուն ոչ միայն ապահովում է տեղեկատվության ընկալումն ու փոխանցումը, այլև դրա վերամշակումը:

Լեզվում է ամրագրվում ինչպես համամարդկային, այնպես էլ ազգային համընդհանուր պատմական փորձը: Մի կողմից, մարդկանց կյանքի պայմանները, նրանց շրջապատող նյութական աշխարհը բնորոշում են մարդկային գիտակցությունը և վարքը, որոնք էլ իրենց հերթին արտացոլվում են լեզվում և հատկապես իմաստաբանության մեջ և քերականական ձևերում, մյուս կողմից, մարդն ընկալում է աշխարհը հիմնականում մայրենի լեզվի ձևերի միջոցով, ինչն էլ սահմանում, բնորոշում է մարդկային մտածողությունը և վարքի կառուցվածքը¹:

«Աշխարհի պատկեր», «աշխարհընկալում», «լեզվական գիտակցություն» հասկացություններին անդրադառնալիս անհնար է շրջանցել լեզվաճանաչողական և լեզվամշակութաբանական գիտակարգերի կարևորությունը լեզու-մտածողություն-մշակույթ փոխհարաբերությունների առանցքում: Լեզու-մշակույթ կապը լեզվականացվում է, այսինքն, իր տրամաբանական արտացոլումն է գտնում տարբեր բառային խմբավորումների մեջ, որոնցից են իմաստային դաշտերը, թեմատիկ, բառիմաստային խմբերը և այլն:

Լեզվաճանաչողական և լեզվամշակութաբանական յուրահատկությունների դիտարկումն առավել հետաքրքրական է դառնում **«բնակավայր»** բառիմաստային խմբի (այսուհետ՝ **ԲԻՄ**) ուսումնասիրությամբ: Բնակավայրը մարդու գոյատևման կարևորագույն կենսական նախապայմաններից է, դրանով էլ պայմանավորված է նաև ուսումնասիրվող ԲԻՄ-ի ընտրությունը:

Անգլերենի «lodging/բնակավայր» ԲԻՄ-ը ձևավորող գոյականների համակողմանի ուսումնասիրությունն իսպաներենի և հայերենի գուգադրությամբ միաժամանակ վեր է հանում այն ազգային, պատմական, քաղաքական, տնտեսական, հասարակական գործոնները, որոնք իրենց անմիջական և, գուցե, անուղղակի դերն են ունեցել սովյալ ԲԻՄ-ի լեզվական յուրահատուկ կերտվածքի վրա:

Ուսումնասիրության ընթացքում ծանոթացել ենք «lodging/բնակավայր» ԲԻՄ-ի՝ հատկապես դրա նույնացուցիչների վերլուծությանը նվիրված բազմաթիվ աշխատությունների (Մ. Chandler, Լ. Աշուրյան, Դ. Գյուրջինյան, Ն.

¹ Маслова В., Современные направления в лингвистике: учебное пособие для студ. высш. учеб. заведений. – М.: Изд.-во «Академия», 2008.

Երնջակյան, Ս. Պապոյան, Ա. Տեր-Պողոսյանց, С. Богатова, И. Давыденко և այլք): Դրանք իրենց գիտական մեծ ներդրումով հանդերձ մասամբ են անդրադարձ կատարում «lodging/բնակավայր» ԲԻՄ-ին՝ հիմնականում կենտրոնանալով միայն «տուն», «օջախ» և «ընտանիք» հասկացությունների կամ հասկացությունների ուսումնասիրության վրա, և լիարժեք պատկերացում չեն տալիս «lodging/բնակավայր» ԲԻՄ-ի և դրա լեզվական կարգայնացման խնդրի մասին: Ուստի, դիտարկելով բնակավայրը որպես մարդկության գոյատևման կարևոր նախապայմաններից մեկը, որի հետ կապված հիմնախնդիրներն արդիական են մինչ օրս, սույն ատենախոսության մեջ փորձ է արվում անզլերենի «lodging/բնակավայր» ԲԻՄ-ը վերլուծել լեզվական կարգայնացման տարբեր սկզբունքների լույսի ներքո՝ իսպաներենի և հայերենի նյութի զուգադրությամբ, և դիտարկել «բնակավայր» հասկացության լեզվաճանաչողական և լեզվամշակութային առանձնահատկությունները, ինչով էլ պայմանավորված է **ուսումնասիրության արդիականությունը**:

Սույն **հետազոտության նյութն** են անզլերենի 314, իսպաներենի 291, հայերենի 330 գոյականները, որոնք ուղիղ կամ փոխաբերական իմաստով արտահայտում են *բնակավայր* նշանակությունը (առաջինից չորրորդ իմաստներով): Որոշ դեպքերում դիտարկվել են գոյականների արդեն իսկ հնացած իմաստները, քանի որ դրանք արտացոլում են պատմությունը և լեզվի զարգացման ընթացքում երբեմն դառնում են գործածական: Ուսումնասիրվող գոյականները դուրս են բերվել և ճշգրտվել անզլերենի՝ *Oxford Advanced Learner's Dictionary of Current English, Webster's New Dictionary of Synonyms, Roget's Thesaurus of English Words and Phrases, Comprehensive Etymological Dictionary of the English Language* և այլ բառարաններից, իսպաներենի՝ *Diccionario Manual de la Lengua Española, Diccionario Manual de Sinónimos y Antónimos de Lengua Española, Océano Práctico Diccionario de Sinónimos y Antónimos, Español. Diccionario esencial de la Lengua Española, Diccionario Etimológico* բառարաններից, հայերենի՝ Է. Աղայանի *Արդի հայերենի բացատրական բառարանից, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանից (քառահատոր), Ս. Մալխասեանցի Հայերեն բացատրական բառարանից, Ա. Սուքիասյանի Հայոց լեզվի հոմանիշների բառարանից, Հայերեն արմատական բառարանից, Նոր Հայկազյան բառարանից* և այլն:

Հետազոտության նպատակն է անզլերենի «lodging/բնակավայր» իմաստն արտահայտող գոյականների համակողմանի ուսումնասիրությամբ վերհանել նշված բառիմաստային խմբի լեզվաճանաչողական հայեցակերպն իսպաներենի և հայերենի լեզվանյութի զուգադրությամբ, ինչին հասնելու համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

1. *վերհանել* անզլերենի «lodging/բնակավայր» բառիմաստային խումբն իմաստաբանական, լեզվաճանաչողական, հոգելեզվաբանական և կորպուսային մոտեցումների և մեթոդների համատեղությամբ և համապատասխան մեթոդների համալիր կիրառմամբ՝ իսպաներենի և հայերենի զուգադրությամբ,

2. *վերլուծել* անգլերենի և զուգադրվող լեզուների համապատասխան գոյականների բառարանային իմաստների իմակային կազմը՝ դուրս բերելով և զուգադրելով «loding/բնակավայր» բառիմաստային խումբը մասնավորեցնող բառիմաստային բոլոր հնարավոր ենթախմբերը (այսուհետ՝ **ԲԻՄԵՆ**),
3. *ստեղծել* «բնակավայր» բառիմաստային խմբի նույնացուցիչների՝ *house, casa, տուն* բառ-ազդականների համընդհանուր լեզվամշակութային պատկերն ազատ զուգորդումների փորձարկման արդյունքերի վերլուծությամբ,
4. «loding/բնակավայր» բառիմաստային խմբի համակողմանի վերլուծությամբ *բացահայտել* կարգայնացման ժամանակակից միջոցները Է. Ռոշի լեզվական կարգայնացման տեսության հիման վրա,
5. *FrameNet, WordNet, Sketch Engine* և ազգային կորպուսների հետազոտական հնարավորությունների դիտարկմամբ *վերհանել* ուսումնասիրվող բառիմաստային խմբի լեզվաճանաչողական առանձնահատկություններն անգլերենում իսպաներենի և հայերենի զուգադրությամբ,
6. *կատարել* «loding/բնակավայր» բառիմաստային խմբի լեզվական կարգայնացումը ճանաչողական կաղապարներից մեկի՝ ֆրեյմի դուրսբերմամբ:

Առաջադրված խնդիրների իրագործման համար կիրառվել են հետևյալ **մեթոդները**՝ լեզվաբանական զննման և նկարագրման, զուգադրական, բաղադրիչային վերլուծության, ազատ զուգորդումների և վիճակագրական:

Հետազոտության **մեթոդաբանական հիմքը** ճանաչողական լեզվաբանության, լեզվամշակութաբանության, ֆրեյմային իմաստաբանության, կորպուսային լեզվաբանության առաջատար հետազոտողների ուսումնասիրություններն են՝ Ջ. Թեյլորի, Ջ. Լակոֆի, Է. Ռոշի, Չ. Ֆիլմորի, Ս. Դիքինսոնի, Ս. Հունսթոնի, Վ. Վորոբյովի, Ս. Ժաբոտինսկու, Ա. Վեժբիցկայայի, Վ. Կոստոմարովի, Ե. Վերեշչագինի, Ջ. Պոպովայի, Ի. Ստերնինի, Ե. Կուրբյակովայի, Վ. Փլունգյանի և այլոց:

Ատենախոսության **նորույթը** պայմանավորված է նրանով, որ աշխատանքում փորձ է կատարվել իսպաներենի և հայերենի զուգադրությամբ լիարժեք պատկերացում տալ անգլերենի «loding/բնակավայր» ԲԻՄ-ի մասին՝ միաժամանակ դիտարկելով այն լեզվաբանական տարբեր միջգիտակարգերի տեսանկյուններից: Աշխատանքում նաև բացահայտվում և ներկայացվում են անգլերենի և իսպաներենի լեզվական կարգայնացման նորագույն յուրահատուկ միջոցները (*FrameNet, WordNet, Sketch Engine, ազգային կորպուսները*): Ատենախոսության մեջ փորձ է արվում անգլերենի էլեկտրոնային նախագծերի օգնությամբ *առաջին անգամ* նմանատիպ ուսումնասիրություն իրականացնել նաև հայերենի և որոշ չափով իսպաներենի նյութի հիման վրա՝ ազգային և համընդհանուր լեզվաճանաչողական առանձնահատկությունների զուգադրմամբ:

Սույն ատենախոսության մեջ ուսումնասիրվող նյութի վերլուծության արդյունքում առաջարկվում են նաև այնպիսի *նոր* հասկացություններ, ինչպիսիք են *ներկայացուցիչ-գուգորդում*, *դերային բաշխում* և *բառ-հանգույց*:

Ատենախոսության **տեսական նշանակությունն** այն է, որ աշխատանքում վերլուծվում են ճանաչողական լեզվաբանության, զուգադրական տիպաբանության, ինչպես նաև լեզվամշակութաբանության և կորպուսային լեզվաբանության առանցքային դրույթներն ու մոտեցումները: Այն կարող է նպաստել անգլերենի, ինչպես նաև իսպաներենի և հայերենի իմաստաբանության ներլեզվական և տիպաբանական զուգադրական ուսումնասիրություններին: Բացի այդ, հետազոտությունը կարող է տեսական հիմք ստեղծել վերոնշյալ բնագավառներում իրականացվող նմանատիպ ուսումնասիրությունների համար:

Ատենախոսությունն ունի որոշակի **գործնական արժեք**: Տարբեր արդյուններից՝ բառարաններից, կորպուսներից, էլեկտրոնային որոնողական նախագծերից հավաքած և մեկտեղած լեզվական նյութը կարող է կիրառվել «անգլերենի բառագիտություն», «անգլերենի և հայերենի զուգադրական տիպաբանություն», «անգլերենի և իսպաներենի զուգադրական տիպաբանություն», ինչպես նաև «համեմատական և զուգադրական լեզվաբանություն», «ճանաչողական լեզվաբանություն», «լեզվամշակութաբանություն», «միջմշակութային հաղորդակցություն» դասընթացների շրջանակներում:

Հետազոտության արդյունքները կիրառելի են նաև եռալեզու բառարանների (անգլերեն-իսպաներեն-հայերեն), ուսումնասիրված լեզուների գանձաբառարանների ստեղծման համար: Սույն ատենախոսության գործնական արժեքն է նաև տարբեր կորպուսների և էլեկտրոնային նախագծերի ստեղծումն ու մեկտեղումը հատկապես իսպաներենի և հայերենի նյութի հիման վրա, ինչպես նաև դրանց առանձնահատկությունների և հետազոտական հնարավորությունների բացահայտումն ու գործնականորեն ներկայացումը, ինչը կարող է օգտագործվել կորպուսային լեզվաբանության տարբեր խնդիրներին նվիրված դասընթացների շրջանակներում:

Ատենախոսության մեջ առաջադրված նպատակով և խնդիրներով է պայմանավորված դրա **կառուցվածքը**: Այն բաղկացած է *ներածությունից*, *երեք գլուխներից*, *եզրակացությունից*, *գրականության ցանկից* և *երկու հավելվածից*:

Ներածական մասում հիմնավորվում են թեմայի ընտրությունը, արդիականությունը, հետազոտության նպատակը, խնդիրները, տեսական և գործնական արժեքները:

Առաջին գլուխը, որը վերնագրված է «**Անգլերենի «բնակավայր» իմաստն արտահայտող գոյականների իմաստային դասակարգումներն իսպաներենի և հայերենի զուգադրությամբ**», բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին և երկրորդ ենթագլուխներում ներկայացվում է լեզվի ճանաչողական հայեցակերպը՝ անդրադարձ կատարելով *լեզվի՝ որպես ճանաչողական մեխանիզմի* և *աշխարհի ճանաչողական պատկերի* գաղափարներին, ինչպես նաև դիտարկվում է «իմաստային դաշտ» և «բառիմաստային խումբ» հասկացությունների ըմբռնումը լեզվաբանության մեջ:

Երրորդ ենթագլխում ներկայացվում է անգլերենի «lodging/բնակավայր» ԲԻՄ-ի վերլուծությունն իսպաներենի և հայերենի զուգադրությամբ, որի արդյունքում հաշվի առնելով տվյալ ԲԻՄ-ը ձևավորող գոյականների *ընդհանուր և տարբերակիչ իմաստային հատկանիշները*, առանձնացվում են ուսումնասիրվող ԲԻՄ-ը մասնավորեցնող երեք բառիմաստային ենթախմբեր (այսուհետ՝ **ԲԻԵՄ**)՝ «մարդկանց բնակավայր» ԲԻԵՄ, «կենդանիների բնակավայր» ԲԻԵՄ և «ընդհանուր՝ մարդկանց և կենդանիների բնակավայր» ԲԻԵՄ: Ուսումնասիրվող գոյականների իմակային կազմի վերլուծության արդյունքում ձևավորվում են նաև նշված ԲԻԵՄ-երն առավել կոնկրետացնող 14 ԲԻՄԵՄ-եր՝ *արական կամ իգական սեռի բնակչի բնակավայր, լավ, բարի կամ վատ, չար մարդկանց հոգիների հետմահու բնակավայր, ունևոր կամ կարիքավոր բնակչի բնակավայր, զինվորական բնակչի, կալանավոր բնակչի, հոգևորական բնակչի, ուսանող/սովորող բնակչի բնակավայր, մեծ և անբարեկարգ կացարան, մեծ և բարեկարգ կացարան, փոքր հասարակ կացարան, փոքր և անբարեկարգ կացարան, մշտական կամ ժամանակավոր կացարան, ընտանի կենդանիների բնակավայր, վայրի կենդանիների բնակավայր, ջրային կենդանիների բնակավայր, թռչունների բնակավայր, ընդհանուր ձեռակերտ բնակավայր, ընդհանուր անձեռակերտ՝ բնական բնակավայր* և այլն:

Դիտարկվում է նաև բազմիմաստ գոյականների՝ տարբեր ԲԻ(Մ)ԵՄ-եր ներթափանցելու առանձնահատկությունը:

Այս առումով հատուկ հետաքրքրություն են ներկայացնում նաև որոշ փիլիսոփաների, գրողների, լեզվաբանների աշխատություններում հանդիպող «բնակավայր» հասկացության փոխաբերական նկարագրության օրինակները: Այսպես, օրինակ, *մարմինը* հոգու տունն է, *մարմինը* մարդու ժամանակավոր տունն է, իսկ *դագաղը*՝ երկնային և տևական², *մարմինն* այն կացարանն է, որտեղ բնակվում է մեղավորի հոգին, տունը նման է երկիմաստ *տեքստի*, որը բաց է ընթերցողի համար, որն ունակ է տեսնելու այն, ինչը խորքում է, բայց մեկնաբանում է այդ խորքային երևույթները սեփական անմեղության կամ մեղքի տեսանկյունից, մեր *հոգին* այն կացարանն է, որտեղ ապրում ենք

² Верещагин Е., Костомаров В., Дом бытия языка. В поисках новых путей развития лингвострановедения: концепция логоэпистемы. – М.: Изд.–во ИКАР, 2000.

ինքներս մեզ հետ, գրողն իր ապաստանն է գտնում *թղթի* վրա³, *մարմինը* հույզերի «պարունակիչ» է⁴, *լեզուն* մարդկային կեցության տունն է⁵ և այլն: 21-րդ դարում, իհարկե, արդիական է նշել նաև *համացանցը*⁶, որպես շատերի համար վիրտուալ բնակավայր:

Ատենախոսության **երկրորդ գլուխը** վերնագրված է «**«Բնակավայր» իմաստն արտահայտող գոյականների իմաստային հիմնատիպերի զուգադրական վերլուծություն»**: Այն բաղկացած է երկու ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում դիտարկվում են լեզվական կարգայնացման դասական և հետ-դասական մոտեցումները՝ Պլատոն, Արիստոտել, Լ. Վիթգենշթայն, Ջ. Լակոֆ, Ջ. Օսթին, Լ. Չադե, Բ. Բեռլին, Պ. Քեյ, Ջ. Թեյլոր, Է. Ռոշ և այլք:

Երկրորդ ենթագլխում ներկայացվում են անգլերենի «lodging/բնակավայր» իմաստն արտահայտող գոյականների ֆոնային իմաստային բաղադրիչների վերլուծության արդյունքներն իսպաներենի և հայերենի զուգադրությամբ: «Բնակավայր» ԲԻԽ-ի *house, casa, տուն* նույնացուցիչների⁶ ֆոնային իմաստային բաղադրիչների⁷ զուգորդային վերլուծությունն իրականացվում է *սզատ զուգորդումների* փորձարկման միջոցով⁸, իսկ արդյունքների վերլուծության համար հիմք են հանդիսանում Է. Ռոշի իմաստային

³ Chandler M., *Dwelling in the text. Houses in American fiction.* – Berkeley: University of California press, 1991.vii.

⁴ Lakoff G., *Women, fire, and dangerous things. What categories reveal about the mind.* – Chicago and London: The University of Chicago Press, 1987.

⁵ Heidegger M., *On the way to language.* – New York: Harper and Row Press, 1971.

⁶ **House, casa, տուն** բառ-ազդակներն դիտարկվում են որպես «lodging/բնակավայր» ԲԻԽ-ի նույնացուցիչներ, քանի որ դրանք իմաստային առումով չեզոք են, արտահայտում են ընդհանուր «բնակավայր» հասկացությունը, տարբեր համատեքստերում կարող են փոխարինել կարգի ցանկացած անդամի և ունեն նաև կիրառման բարձր հաճախականություն:

⁷ «Իմաստային մասեր» հասկացությունը Ե. Վերեշչագինը և Վ. Կոստոմարովը սահմանում են որպես որոշակի տվյալ, իմաստ, որը հնարավոր է դարձնում տրամաբանության և լեզվաբանության մեջ դասակարգումների իրականացումը, և որը իմաստաբանորեն համարժեք է «իմաստային բաղադրիչ» հասկացությանը (այս մասին ավելի մանրամասն տե՛ս Верещагин Е., Костомаров В., *Дом бытия языка. В поисках новых путей развития лингвострановедения: концепция логоэпистемы.* – М.: Изд.–во ИКАР, 2000.):

⁸ Փորձարկման մասնակիցներին առաջարկվել է *house, casa, տուն* բառ-ազդակներին պատասխանել մտքին եկած առաջին 6-7 բառ-հակադրություններով՝ առանց սահմանափակելու վերջիններիս խոսքիմասային պատկանելությունը:

հիմնաստիպերի տեսությունը և նրա կողմից ներկայացված վարկանիշային սանդղակը:

Աղյուսակ 1

N	%	Բառ- հակադրություն (անգլերեն)	%	Բառ- հակադրեց. (իսպաներեն)	%	Բառ- հակադրեց. (հայերեն)
1	30%	family (ընտանիք)	18%	familia (ընտանիք)	68%	ընտանիք
2	20%	comfort (հանգստություն) warmth (ջերմություն)	12%	hogar (օջախ)	35%	ջերմություն
3	19%	food (ուտելիք) safe/security (անվտանգություն)	11%	sofá (բազմոց)	33%	սեթ
4	18%	love (սեր)	9%	hipoteca (հիպոտեկ)	29%	հանգստություն
5	10%	kitchen (խոհանոց)	7%	tranquilidad (հանգստություն)	25%	օջախ

Փորձարկման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ գուցադրվող երեք լեզուներում ամենահաճախ հանդիպողը **family (familia, ընտանիք)** բառ-հակադրությունն է, ընդ որում, ամենաբարձր հաճախականությամբ այն ներկայանում է նախ հայերենում, այնուհետև անգլերենում և համեմատաբար ցածր հաճախականությամբ՝ իսպաներենում:

Փորձարկման վերլուծության արդյունքում ամենաբարձր հաճախականությունն ունեցող բառ-հակադրություններում դիտարկված մեկ բացարձակ եռալեզու համընկնումից (*family-familia-ընտանիք*) բացի առկա է մեկ վերապահումով եռալեզու համընկնում՝ *warmth-[hogar]-ջերմություն*, և երեք երկլեզու համընկնում՝ *love-սեր*, *tranquilidad-հանգստություն*, *hogar-օջախ*: *Warmth-hogar-ջերմություն* բառ-հակադրությունների եռալեզու համընկնումը դիտարկվում է վերապահումով՝ հաշվի առնելով *hogar (օջախ)* բառի «կրակարան, բուխարի» նշանակության մեջ «ջերմություն» իմակի առկայությունը:

Բարձր հաճախականություն ունեցող բառ-հակադրությունների արդյունքում առանձնանում են *house, casa, տուն* նույնացուցիչների եռալեզու լեզվաձանաչողական պատկերները ստեղծող բաղադրիչները՝ *comfort, safe, security, love, warmth, kitchen, family, food* (ամերիկյան մշակույթ), *hipoteca, hogar, familia, tranquilidad, sofá* (իսպանական մշակույթ), *օջախ, ընտանիք, ջերմություն, հանգստություն* (հայկական մշակույթ):

Ազատ զուգորդումների փորձարկման վերլուծության արդյունքում առանձնացված ներկայացուցիչ-զուգորդումները⁹ տեղայնացվում են Է. Ռոշի վարկանիշային սանդղակի յոթ աստիճաններում՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր բառ-հակադեցության հաճախականությունն ըստ պատասխանների քանակի:

Աղյուսակ 2

(ըստ ամենաբարձր հաճախականությունն ունեցող բառ-հակադեցությունների)

Վարկանիշային սանդղակի յոթ աստիճաններ	house	casa	տուն
1. Ամենալավ ներկայացուցիչ-զուգորդում	family (ընտանիք)	familia (ընտանիք)	ընտանիք
2. Լավ ներկայացուցիչ-զուգորդում	comfort (հարմարավետություն) warmth (ջերմություն)	hogar (օջախ)	սեր ջերմություն
3. Բավականին լավ ներկայացուցիչ-զուգորդում	love (սեր) food (կերակուր) safe (անվտանգ)	sofá (բազմոց)	օջախ հանգստություն
4. Միջին լավ ներկայացուցիչ-զուգորդում	relaxation (հանգստացում, թուլացում) bed (մահճակալ) kitchen (խհանոց)	hipoteca (հիպոտեկ)	ապահովություն տանիք երեխաներ հարգանք երջանկություն
5. Բավականին վատ ներկայացուցիչ-զուգորդում	happiness (ուրախություն) rest (հանգիստ) mummy (մայրիկ) peaceful (խաղաղություն) sofa (բազմոց)	tranquilidad (հանգստություն) tele (հեռուստացույց) gastos (ծախսեր) ventana (պատուհան) descanso (հանգիստ) cama (մահճակալ)	պաշտպանվածություն ուրախություն սիրելի մարդիկ հեռուստացույց

⁹ «Բնակավայր» կարգի հիմնատիպային զուգորդումներն առաջարկում ենք անվանել *ներկայացուցիչ-զուգորդումներ*, քանի որ դրանք դուրս են բերվում զուգորդումների միջոցով և այնուհետև դիտարկվում կոնկրետ կարգի ներսում որպես ներկայացուցիչ:

<p>6. Վատ ներկայացուցիչ-գուգորդում</p>	<p>advice (խորհուրդ) bedroom (ննջասենյակ) childhood (մանկություն) quiet (հանգիստ) children (երեխաներ)</p>	<p>recibos (ստացականներ) problemas (խնդիրներ) vecinos (հարևաններ) mueble (կահույք)</p>	<p>սերունդ վարագույր հաճելի լույս քաղաք սեփականություն</p>
<p>7. Շատ վատ ներկայացուցիչ-գուգորդում</p>	<p>carpet (գորգ) cuddle (զրկախառնվել) protection (պաշտպանություն) pool (ավազան)</p>	<p>Agostito alquiler (վարձ) árboles (ծառեր) armonía (ներդաշնակություն) azul (կապույտ)</p>	<p>արդարություն արջուկ երաժշտություն աղյուս ճաղեր</p>

Հայտնի է, որ կարգի ամենալավ ներկայացուցիչը հիմնատիպային է, որի շուրջը կառուցվում է կարգը¹⁰: Տվյալ դեպքում անգլերենում, ինչպես նաև իսպաներենում և հայերենում հիմնատիպային է **ընտանիք** բառ-հակադեցուցությունը: Ինչպես ցույց է տալիս Աղյուսակ 2-ը, «lodging/բնակավայր» կարգի ամենատեղեկատվականը չորրորդ և հինգերորդ աստիճաններն են, ինչը ևս մեկ անգամ ապացուցում է է. Ռոշի իմաստային հիմնատիպերի տեսության՝ կարգայնացման հիմնական մակարդակն ամենատեղեկատվականը դիտարկելու դրույթը:

Ազատ գուգորդումների փորձարկման արդյունքում բոլոր բառ-հակադեցուցությունների վերլուծությամբ առանձնանում են ինչպես եռալեզու, այնպես էլ երկլեզու համընկնումներ:

Եռալեզու համընկնումներն են, օրինակ՝ *family/familia/ընտանիք* - որպես *ամենալավ ներկայացուցիչ-գուգորդում* (առաջին աստիճան),

TV set/tele/հեռուստացույց - որպես *բավականին վատ ներկայացուցիչ-գուգորդում* (հինգերորդ աստիճան),

discussion/discusión/վեճ և *clean/limpieza/մաքուր* - որպես *շատ վատ ներկայացուցիչ-գուգորդում* (յոթերորդ աստիճան):

Անսպասելի է *clean/limpieza-մաքուր* բառ-հակադեցուցությունների ներկայացումը որպես *lodging (vivienda, բնակավայր)* հասկացության *շատ*

¹⁰ Rosch E., Cognitive representations of semantic categories // Journal of Experimental Psychology: Vol. 104 (3), Sep. 1975.

վատ ներկայացուցիչ-գուգորդումներ, այնուամենայնիվ, դա են փաստում փորձարկման արդյունքները:

Երկլեզու համընկնումներն են, օրինակ՝

warmth/ջերմություն - որպես լավ ներկայացուցիչ-գուգորդում (երկրորդ աստիճան, անզերեթում և հայերենում),

comida/ուտելիք - որպես վատ ներկայացուցիչ-գուգորդում (վեցերորդ աստիճան, իսպաներենում և հայերենում): Անզերեթում այս գոյականը տեղայնացված է սանդղակի երրորդ աստիճանում՝ որպես *բավականին լավ ներկայացուցիչ-գուգորդում*:

rest/descanso (հանգստություն) - որպես բավականին վատ ներկայացուցիչ-գուգորդում (հինգերորդ աստիճան, անզերեթում և իսպաներենում), մինչդեռ հայերենում այն ներկայացված է սանդղակի երրորդ աստիճանում՝ որպես *բավականին լավ ներկայացուցիչ-գուգորդում*:

Երկլեզու համընկնումների դեպքում անսպասելի է անզերեթում և հայերենում *mother/մայր* գոյականների տեղայնացումը սանդղակի հինգերորդ աստիճանում՝ որպես կարգի *բավականին վատ ներկայացուցիչ-գուգորդումներ* (իսպաներենում նույնիսկ վեցերորդ աստիճանում), իսկ անզերեթում և իսպաներենում *children/niños* գոյականների դիտարկումը սանդղակի վեցերորդ աստիճանում՝ որպես կարգի *վատ ներկայացուցիչ-գուգորդումներ*, մինչդեռ հայերենում *երեխաներ* բառ-հակադրությունը ներկայացված է չորրորդ աստիճանում՝ իբրև *միջին լավ ներկայացուցիչ-գուգորդում*:

Ատենախոսության երրորդ գլուխը, որը վերնագրված է «**Բնակավայր» բառիմաստային խմբի ուսումնասիրությունը կորպուսային տարբեր համակարգերում**», բաղկացած է վեց ենթագլուխներից: Յուրաքանչյուր ենթագլխում առանձին-առանձին դիտարկվում են էլեկտրոնային տարբեր նախագծերը և կորպուսները որպես կարգայնացման յուրահատուկ միջոցներ: Այս գլխում ուսումնասիրվող լեզվանյութի հիման վրա անդրադարձ է կատարվում *Ճանաչողական կադապարներին* մասնավորապես ֆրեյմին և 1970-ականներին Չ. Ֆիլմորի կողմից սիկզբ դրված **FrameNet** էլեկտրոնային նախագծի առանձնահատկություններին և գործառական հնարավորություններին:

Անզերեթի **FrameNet**, իսպաներենի **MultiWordNet** էլեկտրոնային նախագծերի և հայերենի նյութի բառարանային վերլուծությամբ բացահայտվում են ֆրեյմային բաղադրիչները որպես «բնակավայր» բառիմաստային խմբի *house, casa, տուն* նույնացուցիչների ընդհանրացված իմաստային բաղկացուցիչ-մասեր, որոնց հիման վրա էլ դուրս են բերվում անզերեթի, ինչպես նաև իսպաներենի և հայերենի «բնակավայր» հասկացության ընդհանուր իմաստային բաղադրիչ-մասերը *վայր/տեղ, շինություն, շինարարական նյութ, շինության բաղադրիչ մասեր, նկարագիր, գործառույթ, բնակիչ, միջավայր, ժամանակ, տևողություն, պատճառ*:

Երրորդ գլխում ներկայացվում է նաև 1980-ականներին Ջ. Միլլերի կողմից առաջադրված **WordNet** էլեկտրոնային նախագիծը: Այս նախագծի միջոցով անգլերենի «lodging/բնակավայր» ԲԻԽ-ի ուսումնասիրության արդյունքում դուրս են բերվում անգլերենի *nodes*/սկզբնակետերը՝ սեռանիշները: Այստեղ աստիճանակարգության գլխավոր «հանգույցն» է {thing, entity} սեռանիշը, որն էլ հիմքն է դնում տարաբնույթ և բազմապիսի տեսականիշների ձևավորմանը: Իսպաներենի **MultiWordNet** էլեկտրոնային նախագծի միջոցով որպես սկզբնակետ է դիտարկվում *entidad* սեռանիշը, իսկ հայերենի նյութի բառարանային վերլուծության արդյունքում առանձնանում են *տարածություն* և *նյութ* սեռանիշները:

House/home և *casa/hogar* նույնացուցիչների լեզվաճանաչողական հատկանիշների վերհանման և զուգադրման նպատակով կիրառվում է նաև **Sketch Engine** էլեկտրոնային նախագծի՝ կոնկրետ բառի գանձաբառարանի ներկայացման և բառերի կապակցելիական հնարավորությունների դուրսբերման գործառնությունները: Քանի որ հայերենում այս էլեկտրոնային նախագիծը ևս բացակայում է, ապա նշված հետազոտական խնդիրն իրականացվում է *Արևակի* տվյալների համապատասխան վերլուծությամբ:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անգլերենի *home* (8,466,662 համատեքստ) և *house* (3,587,752 համատեքստ) բառ-հանգույցների կապակցությունները ներկայացված են համապատասխանաբար 105 և 102 քերականական կապակցման միջոցներով, մինչդեռ իսպաներենի և հայերենի դեպքում այդ թվերն անհամեմատելի ցածր են՝ 5-ական քերականական կապակցման միջոցներով են ներկայացված *casa* (984,665 համատեքստ) և *hogar* (149,405 համատեքստ) բառ-հանգույցները, և 7-ական քերականական կապակցման միջոցներով՝ *տուն* (42,711 համատեքստ) և *օջախ* (1,019 համատեքստ) բառ-հանգույցները: Անգլերենում, ինչպես նաև իսպաներենում և հայերենում ուսումնասիրվող նույնացուցիչներն առավել բարձր հաճախականությամբ կապակցվում են *որոշյալի*, *որոշչի* և *խնդրի* քերականական հարաբերություններում:

Երրորդ գլխի վերջին ենթագլխում անդրադարձ է կատարվում նաև ազգային կորպուսներին՝ *Global Web-Based English, Corpus del Español* և *Արևակ*:

Գորպուսային դիտարկումների արդյունքում ամենաբարձր և ամենացածր հաճախականությունն ունեցող տասը գոյականների միջոցով ստեղծվում է «բնակավայր» կարգի գերագույն, հիմնական և ստորին մակարդակների կորպուսային պատկերը (տե՛ս Աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Վարգայնացման մակարդակներ	GloWbE (ԱՄՆ)	GloWbE (ՄԲ)	Corpus del Español	ԱՐԵՎԱԿ
գերագույն	world, place	world, place	casa, mundo	տեղ, տուն

հիմնական	building, land	town, land	cielo, camp	հող, վրան
ստորին	ամենացածր հաճախականությունն ունեցող գոյականները			

Եզրակացության մեջ ամփոփվում են հետազոտության հիմնական արդյունքները.

1. Անգլերենում, ինչպես նաև իսպաներենում և հայերենում «բնակավայր» ԲԻՄ-ը ձևավորող գոյականներն ընդհանրացված ներկայանում են երեք առանձին ԲԻՄԵԽ-երով, որոնց տարանջատման հիմքում ընկած են հասարակական կյանքի զարգացմամբ պայմանավորված բնակավայրերի զանազանությունը և լեզվի միջոցով յուրաքանչյուր բնակավայրի առանձնահատուկ հատկանիշները մասնավորեցնող իմակներ պարունակող բառային միավորների առկայությունը: Անգլերենի 314, իսպաներենի 291 և հայերենի 330 գոյականների դիտարկումը ցույց է տալիս, որ *բնակավայր* նշանակությունն անգլերենում, ինչպես նաև իսպաներենում և հայերենում հիմնականում արտահայտվում է ուղիղ իմաստով՝ անգլերենում կազմելով ընդհանուր գոյականների 41%-ը, իսպաներենում՝ 62%-ը, իսկ հայերենում՝ 65%-ը: Բավականին մեծ է միաժամանակ մեկից ավելի իմաստներով *բնակավայր* նշանակող գոյականների թիվը՝ անգլերենում և իսպաներենում՝ 20%, հայերենում՝ 18%, ինչն էլ նպաստում է տվյալ առենախոսության մեջ ներկայացված բազմաթիվ ԲԻՄԵԽ-երի ձևավորմանը և ապահովում մինևսյն գոյականի ներթափանցումը մեկից ավելի ԲԻ(Մ)ԵԽ-եր:

2. *Բնակավայրը՝ որպես շինություն* բնորոշող երկու կարևորագույն իմաստային հատկանիշներն են *բնակիչները* և *վայրը/տարածքը* մասնավորեցնող իմակները: Այս երկու ընդհանուր իմաստային հատկանիշների առավել մասնավորեցման արդյունքում են ձևավորվում ուսումնասիրվող ԲԻՄ-ի 14 ԲԻՄԵԽ-երը, որոնցից տոկոսային բարձր հարաբերությամբ առանձնանում են ԲԻՄԵԽ-4-ը (*բնակիչների հասարակական դերը*) և ԲԻՄԵԽ-7-ը (*բնակավայրի արտաքին հատկանիշները*):

3. Յուրաքանչյուր ԲԻՄԵԽ-ում ներկայացված գոյականների զուգադրումը արտացոլում է կոնկրետ մշակություն ինչպես պատմական, ազգագրական, աշխարհագրական, այնպես էլ քաղաքական, հասարակական առանձնահատկությունները, որոնք իրենց ամփոջական հետքն են թողնում մարդկանց ապրելակերպի վրա: Անգլիական և զուգադրվող լեզվամշակույթների հասարակական կյանքի տարբերություններն արտացոլվում են հատկապես ԲԻՄԵԽ 7-ի մեջ՝ բնակավայրի *մեծությունը/փոքրությունը* և *բարեկարգությունը/անբարեկարգությունը* ցույց տվող իմակների շնորհիվ:

4. Ուսումնասիրվող ԲԻ(Մ)ԵԽ-երում հայերենն առանձնանում է հոմանշային բազմանդամ շարքերի առկայությամբ՝ պայմանավորված լեզվի բառակազմական առանձնահատկություններով: Գրեթե յուրաքանչյուր ԲԻՄԵԽ-ի վերլուծության ժամանակ այստեղ դիտարկվում են ածանցական (-*արան*, -*անոց*, -*(ա)տտան*) և համադրական (-*տուն*, -*բու(յ)ն*), ինչպես նաև -*(ա)տեղ*, -*խուց*, -*վայր*) բաղադրիչներով բարդ կազմություններ: Նման կազմությունները ներկայացնում են հայերենի *բնակավայր* իմաստն արտահայտող գոյականների 40%-ը, մինչդեռ անգլերենում և իսպաներենում դրանք արմատական բառեր են՝ միայն մի քանի բացառությամբ:

5. Անգլերենի և իսպաներենի «բնակավայր» ԲԻՄ-ի ստուգաբանական վերլուծությունը վեր է հանում *կյանքի* և *կացարանի* գաղափարների փոխկապակցվածությունը *life-(to)live-living* և *vida-vivir-vivienda* ածանցական հարաբերությունների դիտարկմամբ, մինչդեռ հայերենում դիտարկվում է *կացարան* գոյականի իմաստագրագման քառաբաղադրիչ շղթա՝ *գեն-կին-կեն-կացարան*: *Lodging/բնակավայր* իմաստն արտահայտող գոյականների վերհանումը և իմաստաբանական վերլուծությունը փաստում է այն, որ *կյանքը*, հետևաբար նաև *բնակավայրը*/[*կացարանը*] գոյություն ունի չորս սկզբնատարրերում՝ *ջրի*, *օդի*, *հողի* և նույնիսկ *կրակի* մեջ:

6. Մեր կողմից իրականացված *ազատ զուգորդումների* փորձարկումը ևս մեկ անգամ ապացուցում է, որ միննույն բառ-ազդակի զուգորդումները տարբեր են տարբեր մշակույթներում՝ արտացոլելով կոնկրետ հասկացության լեզվաձանաչողական հայեցակերպը: Իրականացված եռալեզու փորձարկումը ցույց է տալիս, որ «բնակավայր» ԲԻՄ-ի *house, casa, տուն* նույնացուցիչների հետ զուգորդվող ամենաբարձր հաճախականությունն ունեն *family, familia, ընտանիք* բառ-հակազդեցությունները:

7. Ազատ զուգորդումների փորձարկման արդյունքերի վերլուծությամբ վեր է հանվում «բնակավայր» հասկացության կարգայնացման հաջորդ սկզբունքը: Փորձարկումը ցույց է տալիս է. Ռոշի հիմնատիպերի տեսության այն ելակետային դրույթը, համաձայն որի՝ կարգի ամենատեղեկատվականը հիմնական մակարդակն է: Փորձարկման արդյունքում վարկանիշային սանդղակի տարբեր աստիճաններում տեղայնացված եռալեզու համընկնումները դուրս են բերում *lodging, vivienda, բնակավայր* հասկացությունների *house, casa, տուն* նույնացուցիչները բնորոշող անգլերենի և գուգադրվող լեզուների համընդհանուր լեզվամշակութային տարրերը՝ *հեռուստացույց, բազմոց, մահձակալ, խոհանոց, վարագույր, մայր, երեխաներ*:

8. Առցանց որոնողական տարբեր համակարգերում անգլերենի և իսպաներենի «բնակավայր» ԲԻՄ-ի ուսումնասիրության արդյունքում *FrameNet, WordNet* և *Sketch Engine* էլեկտրոնային նախագծերը ձեռք են բերում նոր, այն է՝ կարգայնացման յուրահատուկ միջոցների կարգավիճակ:

ա) Անգլերենում և գուգադրվող լեզուներում ուսումնասիրվող ԲԻՄ-ը ներկայանում է տարբեր ֆրեյմերով: Վերլուծության արդյունքում

առանձնանում են «բնակավայր» ԲԻՄ-ը պատկերող միայն երկու համընդհանուր ֆրեյմ՝ *{շինվածք/կառույց}* և *{բնական միջավայր}*։

բ) Անգլերենի *WordNet* էլեկտրոնային նախագծի ուսումնասիրության հիմքում ընկած է գոյականների իմաստային նկարագրության *գերադաս+տարբերակիչ հասկանիչների* սկզբունքը, մինչդեռ իսպաներենի *MultiWordNet* էլեկտրոնային նախագծի դիտարկումն ուսումնասիրվող գոյականների վերլուծությամբ ցույց է տալիս, որ այստեղ, ի տարբերություն *WordNet*-ի, գործում է ոչ թե կոնկրետ բառի, այլ տվյալ բառը ներկայացնող ընդհանուր տիրույթի տրամաբանական տեսականիչների առանձնացման սկզբունքը։ Հայերենի նյութի հիման վրա բառարանային վերլուծության արդյունքում ձևավորվում է սեռատեսականիչային հարաբերությունների հնգաստիճան համակարգ՝ *{տարածություն}* և *{նյութ}* սկզբնակետերով։

գ) *Sketch Engine* առցանց որոնողական համակարգում ներկայացված անգլերենի *house* և *home* գոյականների համընկնող զուգորդումների վերլուծության արդյունքում ստեղծվում է անհատի կյանքի փուլերը ընդհանրացնող մի պատկեր, որը փաստում է ամերիկյան մշակույթում *ավտոմեքենայի* կենսական անհրաժեշտության և կարևորության մասին։ Ի տարբերություն անգլերենի՝ իսպաներենում վեր է հանվում իսպանական մշակույթում *ընտանիքի* ավանդական մեծ արժեքը։ Հայերենի նյութի հիման վրա նման ուսումնասիրություն չի կատարվել համապատասխան որոնողական հնարավորություններով էլեկտրոնային նախագծի բացակայության պատճառով։

9. Կորպուսային ուսումնասիրության արդյունքում (*GloWbE, Corpus del Español, ԱԸԵՎԱԿ*) ուսումնասիրվող գոյականների բարձր և ցածր հաճախականության տվյալների վերլուծության հիման վրա առանձնանում է «բնակավայր» ԲԻՄ-ի կարգայնացման մեկ այլ պատկեր՝ *building, land* (անգլ. ՄՄՆ), *town, land* (ՄԲ), *cielo, camp* (իսպ.), *հող, վրան* (հայ.) հիմնական մակարդակի միավորներով։

Այսպիսով, սույն ատենախոսության մեջ բացահայտվում են *lodging/բնակավայր* հասկացության կարգայնացման չորս հնարավոր սկզբունքները՝ 1. ուսումնասիրվող գոյականների իմակային կազմի վերլուծությամբ, 2. *բնակավայր* ԲԻՄ-ի նույնացուցիչներով ազատ զուգորդումների փորձարկմամբ, 3. *FrameNet, WordNet* և *Sketch Engine* առցանց որոնողական համակարգի միջոցով նույնացուցիչների կապակցելիական առանձնահատկությունների վերհանմամբ և 4. համապատասխան կորպուսների օգնությամբ *բնակավայր* իմաստն արտահայտող գոյականների հաճախականության դիտարկմամբ։ Կարգայնացման նշված չորս փորձերից եռալեզու համընկնում է նկատվում *բնակավայր* հասկացության՝ միայն իմակային կազմի վերլուծությամբ և կապակցելիական հնարավորությունների վերհանմամբ (*FrameNet, WordNet, Sketch Engine*) ստեղծված կարգայնացման պատկերներում, մնացած երկու սկզբունքների դեպքում նմանություններն

ավելի քիչ են, քանի որ գերիշխում են լեզվական կարգայնացման լեզվամշակութային և լեզվաճանաչողական առանձնահատկությունները:

Ատենախոսության վերջում տրված են օգտագործված գրականության ցանկը, ինչպես նաև երկու հավելվածներ, որտեղ ներկայացված են հետազոտության գործնական արդյունքները:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում՝

1. Անգլերենի և հայերենի «Բնակավայր» իմաստ արտահայտող գոյականների իմաստային հիմնատիպերի զուգադրական վերլուծություն // Կանթեղ, Գիտական հոդվածների ժողովածու, –Եր.: «Ասողիկ» հրատարակչություն, 2012 1 (50). – էջ 74-80:
2. Անգլերենի և հայերենի «Բնակավայր» իմաստ արտահայտող գոյականների իմաստային հարաբերությունների զուգադրական վերլուծություն // Կանթեղ, Գիտական հոդվածների ժողովածու, –Եր.: «Ասողիկ» հրատարակչություն, 2012 2 (51). – էջ 56-62:
3. On some peculiarities of the lexico-semantic group of nouns denoting “Human Dwellings” in English and in Armenian // Լրատու, Գիտական հոդվածների ժողովածու, – ԼՂՀ: «Լիմուշ» հրատարակչություն, 2012 2 (13). – էջ 274-281:
4. Frame as a means of computerized categorization (on the material of English, Spanish and Armenian nouns denoting “LODGING”) // Լրատու, Գիտական հոդվածների ժողովածու, – ԼՂՀ: «Լիմուշ» հրատարակչություն, 2014. – էջ 317-326:
5. On some peculiarities of the lexico-semantic group of nouns denoting “human dwellings” in Spanish // Humanities and Social Sciences in Europe: Achievements and Perspectives, 3rd international symposium, 28th April, 2014; –Vienna: “East West” Association for Advanced Studies and Higher Education GmbH, 2014. –pp. 272-277.
6. Home/house, casa և տուն հասկացությունների ֆոնային իմաստային բաղադրիչների զուգորդային վերլուծություն (Է. Ռոշի հիմնատիպերի տեսության ներքո) // Բանբեր, –Եր.: ԵՊԼՀ համալսարանի «Լինգվա» հրատարակչություն, 2014 1 (30). – էջ 202-213:

Лингвокогнитивный аспект лексико-семантической группы «место жительства» в английском языке в сопоставлении с испанским и армянским

Одним из актуальных направлений развития современного языкознания является исследование проблемы языковой категоризации. В этом контексте особую значимость приобретает проведение семантической категоризации определенных явлений окружающей действительности.

В настоящей диссертации рассмотрение лингвокогнитивных и лингвокультурных соотношений проводится на материале лексико-семантической группы (ЛСГ) «место жительства».

Место жительства - одно из жизненно важных условий существования человека, чем и обусловлен выбор изучаемой группы. В данной работе анализ ЛСГ со значением места жительства в английском языке впервые предпринимается с помощью ряда различных методов языковой категоризации. **Актуальность настоящей диссертации** обусловлена и тем фактом, что исследование проводится на материале современного английского языка в сопоставлении с испанским и армянским.

Материалом исследования послужили 314 английских, 291 испанских, 330 армянских существительных, которые в прямом или в переносном значении (с 1-по 4 включительно) обозначают «место жительства».

Целью исследования является проведение всестороннего анализа английских существительных со значением «место жительства» и выявление лингвокогнитивного аспекта данной ЛСГ на основе сопоставления материалов испанского и армянского языков.

Для достижения данной цели были поставлены следующие конкретные **задачи**: 1) на основе комплексного применения семантического, лингвокогнитивного, психолингвистического и корпусного подходов и методов *выявить* ЛСГ «место жительства» в английском языке в сопоставлении с испанским и армянским языками, 2) *проанализировать* семный состав исследуемых существительных в изучаемых языках, выявляя и сопоставляя всевозможные конкретизирующие данную ЛСГ лексико-семантические подгруппы, 3) *создать* универсальную для трех изучаемых языков лингвокогнитивную картину идентификаторов ЛСГ «место жительства» – слов-стимулов *house, casa, տնի* - на основе анализа результатов экспериментов с использованием метода свободных ассоциаций, 4) посредством всестороннего анализа ЛСГ «место жительства» *выявить* современные методы категоризации на основе теории семантических прототипов Э. Рош, 5) с учетом исследовательских возможностей проектов *FrameNet, WordNet, Sketch Engine*, а также национальных корпусов *выявить* лингвокогнитивные особенности изучаемой ЛСГ в английском языке в сопоставлении с испанским и армянским, 6) *провести* языковую категоризацию ЛСГ «место жительства» на базе одной из современных когнитивных моделей, а именно фрейма.

Для решения вышеупомянутых задач были использованы **методы** лингвистического наблюдения и описания, компонентного анализа, свободных ассоциаций, а также сопоставительный и статистический методы.

Научная новизна исследования заключается в том, что в данной работе была сделана попытка представить многоаспектный междисциплинарный анализ ЛСГ «место жительства» в современном английском языке в сопоставлении с испанским и армянским. В работе также выявлены и использованы новейшие методы языковой категоризации английского языка (*FrameNet, WordNet, Sketch Engine*). В ней впервые сделана попытка аналогичного изучения материалов испанского и армянского языков.

В результате проведенного анализа в данной работе предлагаются такие новые понятия, как *ассоциация-представитель, ролевое членение* и *узловое слово*.

Теоретическая значимость исследования заключается в том, что его результаты могут способствовать дальнейшему глубокому, многоплановому изучению семантических особенностей различных лексических групп английского языка как во внутрисистемном, так и в типологическом плане - в сопоставлении с другими языками, в частности, испанским и армянским на основе различных принципов языковой категоризации.

Практическая ценность исследования обусловлена тем, что выбранный из различных источников - словарей, корпусов, электронных проектов - материал английского, а также испанского и армянского языков может быть применен в вузовских курсах по лексикологии английского языка, сопоставительной типологии английского и армянского языков, сопоставительной типологии английского и испанского языков, а также когнитивной лингвистике, лингвокультурологии, межкультурной коммуникации и т.д. Результаты исследования могут быть применены при составлении практических пособий и трехязычных словарей (англо-испано-армянских), а также при создании тезаурусов вышеназванных языков.

Практическая ценность диссертации заключается также в том, что ее результаты могут быть использованы при создании электронных проектов и корпусов испанского и армянского языков.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, библиографии и двух приложений.

Linguo-cognitive aspect of lexico-semantic group of nouns denoting “lodging” in English in comparison with Spanish and Armenian languages

One of the current trends in modern linguistics is the study of language categorization. In this respect of special importance is semantic categorization of certain phenomena of reality.

In the present thesis the peculiarities of linguo-cognitive and linguo-cultural relationship are revealed through the study of the lexico-semantic group of nouns denoting “lodging” (hereinafter LSG). The choice of this particular LSG is conditioned by the fact that lodging is a vital prerequisite for human survival and its study may bring about more linguistic findings. From this perspective it may be claimed that the current thesis is the first study of “lodging” LSG in the light of different principles and methods of language categorization. Moreover, the study under consideration is the first exploration of the English language material in comparison with Spanish and Armenian. These facts determine the **topicality of the present research**.

The **object** of research are nouns literally or figuratively denoting “lodging” by their first four definitions recorded in dictionaries or revealed through corpus data analysis.

Hence, through the multifaceted linguistic analysis of the above named nouns, the **research aims** to identify the linguo-cognitive aspect of LSG of nouns denoting “lodging” in English in comparison with Spanish and Armenian.

To achieve the aim of the research the following **objectives** are set forth: to 1) *identify* English LSG “lodging” through the thorough consideration of linguo-cognitive, psycholinguistic and corpus approaches and relevant methods in comparison with Spanish and Armenian, 2) *carry out* semantic componential analysis of the nouns under study viewing them in all possible lexico-semantic sub-groups, 3) *create* linguo-cultural prototype images of the current LSG by means of psycholinguistic experiment of free associations, 4) *discover* innovative methods of language categorization in compliance with the semantic prototype theory by E. Rosch, 5) *reveal* linguo-cognitive peculiarities of LSG “lodging” through the identification of *FrameNet*, *WordNet*, *Sketch Engine* electronic projects and national corpora research possibilities, 6) *categorise* LSG “lodging” as a cognitive frame.

The **novelty of the research** is determined by the multidisciplinary approach to the investigation of the LSG under study. Here the modern methods of linguistic categorization are manifested on the material of the English language and based on them an attempt is made to create suchlike electronic projects covering the existing gap in the Armenian corpus sphere and to some extent in the Spanish as well. Moreover, within the framework of conducted research a number of new notions are coined and contextually applied, i.e. *member-association*, *role distribution* and *word-linker*.

The **methodological toolkit** involves descriptive, contrastive, semantic componential analysis, free association and statistical methods.

The **theoretical significance of the study** is conditioned by the fact that here the core approaches and principles of cognitive, comparative, contrastive, corpus linguistics, linguo-cultural studies are presented in detailed interdisciplinary analysis. The results of the conducted research may contribute to further semantic and comparative contrastive

studies in English as well as in Spanish and Armenian. The thesis may also create a theoretical ground for further researches in the above named linguistic spheres.

The **practical value** of the research hinges on the complexity of data from dictionaries, corpora and electronic projects which are subject to further application in the framework of such academic courses as “English Lexicology”, “Contrastive Typology of English and Spanish”, “Contrastive Typology of English and Armenian”, as well as “Comparative and Contrastive Linguistics”, “Cognitive Linguistics”, “Intercultural Communication”, “Cultural Studies”, etc. The results of the research may also be used in compiling manuals, mono- and multilingual dictionaries (English-Spanish-Armenian), thesauruses. It is the practical worth of the study to discover and manifest the research possibilities and peculiarities of English electronic projects, corpora and to make an attempt in creation of suchlike projects in Spanish and Armenian as well which will contribute to further possible studies in corpus sphere.

The **structure of the thesis** flows from the issues touched upon in the research. It consists of an introduction, three chapters, a conclusion, a bibliography and two appendices.